ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԳԱԼՍՏՅԱՆ Ն. Մ.

Գիտական և հասարակական լայն շրջանակներում, երբ քննարկվում է հասարակական կազմակերպությունների ձևավորման և զարգացման հարցը Հայաստանում, երբեմն ճիշտ չի գնահատվում դրանց դերը խորհրդային շրջանի հայ հասարակական մշակութային կյանքում: Փաստ է, որ խորհրդային համակարգում հասարակական կազմակերպությունները ստեղծվում էին պետության անմիջական միջամտությամբ, և իշխող կուսակցությունը, ելնելով իր գաղափարախոսությունից, սահմանում էր ՀԿ-ների գործունեության առաքելությունը: ՀԿ-ները հիմնականում ֆինանսավորվում էին պետության կողմից և ունեին հարուստ նյութական բազա, իսկ անդամավճարային մուծումները ավելի շատ կրում էին ձևական բնույթ: Խորհրդային փակ համակարգի պայմաններում որոշ ՀԿ-ներ իրենց գործունեությամբ նպաստեցին հայապահպանության մի շարք խնդիրների լուծմանը և Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդմանը: Մասնավորապես, շնորհիվ Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի և Սփյուռքահայության հետ կապերի կոմիտեների գործունեության՝ արտերկրի հայ էթնոսի մի ստվար զանգված կարողանում էր շփվել ազգային մշակույթի արժեքների հետ: Որոշ ՀԿ-ներ (օրինակ՝ Գրողների միություն, Կոմպոզիտորների միություն և Նկարիչների միություն), որոնք ձևավորվել էին մասնագիտական շահերի հիման վրա, մշակույթի ոլորտում ավելի շատ հակված էին ազգային արժեքների պահպանմանը[1]:

Հետխորհրդային շրջանում ՀԿ սեկտորի զարգացումը ուներ որոշ առանձնահատկություններ: Դրանք, կրելով մարդասիրական ու բարեգործական բնույթ, հիմնականում պայմանավորված էին 1988 թ. աղետալի երկրաշարժի, Լեռնային Ղարաբաղի զինված հակամարտության հետևանքների վերացման, փախստականների խնդիրների լուծման և այլ հարցերով: Երբ մարդասիրական օգնության պահանջը նվազեց, այդ կազմակերպությունների մի մասը լուծարվեց: Հետագայում ՀԿ-ների գործունեության թիրախը կուտակված սոցիալական խնդիրների հաղթահարումն էր, քաղաքացիական հասարակության կայացումը և ժողովրդավարությունը, մարդու իրավունքների արևմտյան արժեքային համակարգի ներդրումը[2]:

Ազգային զարթոնքի շրջանում, այն է՝ Հայաստանի անկախության ձեռքբերումը, Ղարաբաղյան շարժումը և Ադրբեջանի նկատմամբ տարած հաղթանակը, ձևավորվեցին մի շարք ՀԿ-ներ, որոնց գործունեության առաքելությունն էր հայ էթնոսի ինքնության, լեզվի, ավանդական մշա-

[1] Հայաստանի ՀԿ սեկտորի գնահատում, Ե., 2001, էջ 9:
[2] Հայաստանի ՀԿ սեկտորի գնահատում, համեմատական հետազոտություն, Ե., 2004, էջ 11:

կութային արժեքների պահպանումը: Դա հաճախ իր արտացոլումն է ստացել ՀԿ-ների անվանումներում՝ «Գերդաստան», «Շեն», «Հազարաշեն», «Ակունք», «Ոստան», «Հարսնասար», «Հայրենիք հայոց», «Ֆիդայի» և այլն: Օրինակ՝ «Վերադարձ արմատներին» հասարակական բարեգործական միությունը, (1991) հիմք ընդունելով այն իրողությունը, որ «Հայոց պետականության (ՀՀ և ԼՂՀ) սահմաններից դուրս ապրող հայության ինքնության և ինքնագիտակցության, ազգային ոգու և մշակույթի պահպանման, վերահաստատման երաշխավորը մայրենի լեզուն է, հայոց դպրոցը, զինված է Սփյուռքի, հատկապես նրա պայմանականորեն «խորհրդային», «ներքին» սփյուռք կոչվող հատվածի վերազարթոնքին զորավիգ լինելու առաքելությամբ»: Որպես այդ խնդիրների լուծման ուղի՝ ՀԿ-ն կարևորել էր Սփյուռքի կրթամշակութային կենտրոններին հազարավոր այբբենարանների, մայրենի լեզվի դասագրքերի, ինքնուսույցների, քարտեզների, տեսաժապավենների տրամադրումը[3]:

Նշեք, որ ինչպես մյուս, այնպես էլ մշակութային գործառույթ իրականացնող ՀԿ-ները ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպություններ են, որոնք նաև յուրաքանչյուր քաղաքացիական հասարակության զարգացման և կայացման կարևորագույն գրավականն են: Դրանք շահույթ չհետապնդող, կամավորության հիմքի վրա ստեղծված մարդկանց խմբեր են, որոնք միավորվում են ընդհանուր նպատակների և հետաքրքրությունների շուրջ: Այդ բնագավառի հասարակական կազմակերպությունները սովորաբար զբաղվում են այնպիսի խնդիրներով, որոնք երբեմն պատշաճ ուշադրության չեն արժանանում պետության կողմից կամ չեն կարող լուծվել կառավարական մակարդակով:

ՀԿ-ների գործունեությունը կարգավորվում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով: Այդ խնդիրներով զբաղվող մասնագետները պայմանականորեն առանձնացնում են չորս հիմնական շարժառիթ, որ նպաստել և դեռևս շարունակում են խթանել Հայաստանում հասարակական կազմակերպությունների ստեղծման գործընթա- ցին. 1) հասարակական պահանջ արտահայտելու նպատակով ստեղծված ՀԿ-ներ, 2) դրամաշնորհ ստանալու նպատակով ստեղծված ՀԿ-ներ, 3) ՀԿ-ներ, որոնք միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ են և ստեղծված են ուղղակիորեն դրանց կողմից, 4) պետության կողմից ստեղծված ՀԿ-ներ[4]:

Մշակութային ոլորտում գործող շուրջ 13 ՀԿ-ների նախագահների և ներկայացուցիչների հետ իրականացրած խորին հարցազրույցների արդյունքները հնարավորություն են տալիս հանգելու եզրակացության, որ դրանց որոշ մասը ստեղծվել է ոչ թե «դրամաշնորհներ ստանալու համար, քանի որ այդ ՀԿ-ների գործունեության առաքելությունը չի համընկնում միջազգային կազմակերպությունների կողմից հայտարարված դրամաշնորհային ծրագրերի նպատակներին» և իրենց գործունեությամբ ավելի համապատասխանում են նշվածներից առաջին խմբին: Նյութերի վերլու-

[3] Հայաստանի հասարակական բարեգործական կազմակերպությունների տեղեկատու, Ե., 1997, էջ 72:

[4] Տե՛ս **Վարդանյան Թ., Ավետիսյան Կ.,** Երիտասարդական հասարակական կազմակերպությունների դերը Հայաստանում, Ե., 2005, էջ 10:

ծությունից պարզ է դառնում, որ, ի տարբերություն մարդու իրավունքների աջակցության, սոցիալական և առողջապահության ծառայություններ մատուցող, օրենսդրության, պետական ու տեղական քաղաքականության բարելավման, հասարակության կայունացման և այլ ոլորտներում[5] գործող ՀԿ-ների, մշակութային ոլորտի ՀԿ-ների առջև ծառացած են բազում խնդիրներ, որոնք մյուսներից տարբերվում են իրենց առանձնահատկություններով: Այդ խնդիրները սահմանափակում և նվազեցնում են դրանց արդյունավետ գործելու հնարավորությունը:

Հայաստանում գրանցված են ավելի քան 4000 հասարակական կազմակերպություններ[6], որից միայն երկու տոկոսն է գործում մշակութային ոլորտում: Սակայն գրանցված ՀԿ-ների թվաքանակի բարձր ցուցանիշը չի կարող համարվել ՀՀ-ում երրորդ սեկտորի կայացվածության ապացույց: Այդ կապակցությամբ մշակույթի ոլորտում գործող նշված 13 ՀԿ-ների ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ դրանցից ութը պետական գրանցում ստանալուց հետո ֆինանսական միջոցների բացակայության պատճառով ոչ մի գործունեություն չէին կարողացել իրականացնել, երկուսը իրենց սուղ միջոցներով փոքր թվաքանակով շահառուների շրջանում կազմակերպել էին միջոցառումներ, երկուսը՝ անհատ բարերարների միջոցներով, իսկ մեկը դրամաշնորհներով իրականացրել էին մինչև երեք ծրագիր:

Հետազոտությունը ցույց տվեց, որ ազգային մշակույթի ոլորտում գործող ՀԿ դաշտի կայացմանը խոչընդոտում են հետևյալ խնդիրները.

1) ՀԿ-ների գաղափարախոսական ուղղվածությունը. Ըստ հետազոտության արդյունքների՝ հայրենասիրության, հայեցի դաստիարակության, էթնիկ ինքնության և ազգային մշակութային արժեքների պահպանման և տարածման ոլորտում գործող ՀԿ-ների թվաքանակը քիչ է, և նույնիսկ հասարակական պահանջի դեպքում բացակայում է նման ուղղվածությամբ կազմակերպությունների ստեղծման մոտիվացիան: Այդ հանգամանքը պայմանավորված է այն փաստով, որ միջազգային կազմակերպությունները այնքան էլ հետաքրքրված չեն նման նպատակներով և հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ների ֆինանսավորմամբ, իսկ ազգային արժեքների պահպանման և տարածման խնդիրները համարում են պետության հոգածության առարկա: Միջազգային կազմակերպություններն առավել կարևորում են միջազգային հանրությանը հայ ժողովրդի ինտեգրման, արևմտյան արժեքների տարածման, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացման խնդիրները: Անշուշտ, նման մոտեցումը սահմանափակում է մշակութային ուղղվածություն ունեցող ՀԿ-ների՝ դրամաշնորհներ ստանալու հնարավորությունները: Այդ երևույթը երբեմն բացասաբար է ընկալում ՀԿ սեկտորի այդ ոլորտը, և եվրոպական արժեքային համակարգի «ներմուծումը» հայ հասարակության մեջ համարում են լուրջ մարտահրավեր Հայաստանում ազգային արժեքների պահպանման համար:

---

[5] Հասարակական կազմակերպությունների հիմնախնդիրները Հայաստանում. օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտություն, Ե., 2007, էջ 7:

[6] Հասարակական կազմակերպությունների դերը հանրային քաղաքականության ձեվավորման գործընթացում, Ե., 2007, էջ 18:

2) ՀԿ-ների ֆինանսական անկախության հարցը. Այնուհանդերձ, ՀԿ-ների ֆինանսական անկախությունը այդ ոլորտի ամենացավոտ խընդիրներից է: Ֆինանսական անկախության կարևորագույն բաղկացուցիչներից են հասարակական գործունեություն ծավալելու նպատակով անհատույց տրվող ֆինանսական միջոցները՝ այսպես կոչված «*Grant*»-ները կամ դրամաշնորհները: Դրանք պետք է օգտագործվեն ոչ թե «գրանտառուի», այլ 3-րդ կողմի շահերը պաշտպանելու համար[7]: Բայց դոնոր կազմակերպությունների կողմից դրամաշնորհային ծրագրերի գերակայությունների սահմանումը երբեմն ՀԿ-ներին զրկում է անկախ գործելու հնարավորությունից և հեռացնում հայ հասարակության մեջ գոյություն ունեցող իրական հիմնախնդիրների լուծումից: Ելնելով դրանից՝ անկախ իրենց սահմանած նպատակներից և խնդիրներից, ՀԿ-ները փորձում են հարմարվել դոնորների ծրագրերին՝ երբեմն խեղաթյուրելով ազգային դիմագիծը: Միջազգային կազմակերպությունները վերջին շրջանում հաճախակի են ֆինանսավորում այնպիսի թեմաներ, ինչպիսիք են երեխաների իրավունքները, սեռական կամ կրոնական փոքրամասնությունների պաշտպանությունը, ընտանեկան բռնությունները և այլն: Ֆինանսական միջոցներ ձեռք բերելու համար որոշ ՀԿ-ներ, կորցնելով իրենց ինքնուրույնությունը և երբեմն հաշվի չառնելով հայ ժողովրդի դարավոր ավանդույթները և սովորույթները, նրա մտակերտվածքը, «դրսից» նոր մշակութային տարրեր են ներմուծում Հայաստան, որը միանշանակորեն չի ընդունվում հայ հասարակության կողմից: Դրա ցայտուն օրինակը հայ ընտանիքում կնոջ նկատմամբ գոյություն ունեցող բռնությունների հաղթահարման համար միջազգային կազմակերպությունների կողմից «բռնության ենթարկված կանանց համար» Երևանում, Գեղարքունիքի և Շիրակի մարզերում ժամանակավոր կացարանների՝ *shelter*-ների ստեղծումն է: Ամենևին չնսեմացնելով նման ծրագրերի կարևորությունը՝ այդուհանդերձ, պետք է նշել, որ ՀԿ-ները այդպիսի ծրագրեր իրականացնելուց առաջ պետք է լավատեղյակ լինեն և հաշվի առնեն հայ ժողովրդի մշակութային առանձնահատկությունները: Դրա մասին են վկայում նաև այդ հիմնախնդրի վերաբերյալ հանրապետությունում իրականացրած սոցիոլոգիական հետազոտության արդյունքները[8]:

Սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքներով՝ հայաստանյան ՀԿ դաշտի ավելի քան 87 տոկոսն իր գործունեությունն իրականացրել է արտասահմանյան դոնորների ամբողջական կամ մասնակի օգնությամբ[9]: Այսինքն՝ հասարակական կազմակերպությունների մի մասը «ստիպված» զբաղվում է ոչ թե հասարակական խնդիրների իրական լուծմամբ, այլ կատարում է այն, ինչ ակնկալում են ֆինանսական միջոցներ ապահովողները: Այս իրավիճակը, սակայն, վերջին տարիներին որոշակի փոփոխության է ենթարկվել: ՀԿ-ների շուրջ 22 տոկոսը 2007 թ.

---

[7] *www.humanities.edu.ru*

[8] Ընտանեկան բռնությունները Հայաստանում. սոցիոլոգիական հարցում, Ե., 2002, էջ 88:

[9] Տե՛ս Հայաստանի ՀԿ սեկտորի գնահատում, համեմատական վերլուծություն, Ե., 2004:

ստացել է պետական որոշակի սուբսիդիաներ և դրամաշնորհներ[10]: Չնայած պետական ֆինանսական որոշակի աջակցությանը՝ ՀԿ-ների ֆինանսական խնդիրները, ըստ փորձագետների, պետք է հոգա ոչ միայն պետությունը կամ արտասահմանյան դոնորը, այլ հենց ՀԿ-ն, որին պետք է հնարավորություն տրվի սեփական եկամուտները աշխատելու և դրա շնորհիվ հասարակական գործունեությունը ապահովելու: Մշակութային սեկտորում գործող ՀԿ-ները վերջին տարիներին ֆինանսական ռեսուրսներ են սկսել ստանալ նաև եկեղեցուց և Սփյուռքից:

3) ՀԿ-պետություն հարաբերության ոլորտին առնչվող խնդիրները. «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքով ՀԿ-ներին արգելվում է զբաղվել շահույթ հետապնդող կամ ձեռնարկատիրական գործունեությամբ[11], ինչն էլ իր հերթին հանգեցնում է ՀԿ-ի կախվածությանը դոնոր կամ սնուցող կազմակերպությունից, սեփական շահերը հետապնդող որևիցե խմբից կամ անհատից: ՀԿ-ներին թույլատրվում է ձեռնարկատիրությամբ զբաղվել միայն այն դեպքում, երբ իրենք ստեղծում են պետությանը հարկատու դուստր ձեռնարկություններ: Հարկման այս մեխանիզմը առաջացնում է ՀԿ-ների դժգոհությունները, քանի որ վերջիններս այդ գումարներն օգտագործում են ոչ թե սեփական կարիքները հոգալու, այլ հասարակական խնդիրները լուծելու նպատակով:

Վերջին տարիներին ՀԿ-պետություն հարաբերությունները որոշակի զարգացում են ապրում: Այս փաստը մասամբ պայմանավորված է միջազգային կազմակերպությունների կողմից ՀԿ-ների՝ քաղաքացիական հասարակության կայացման գործում կարևոր դերի ակտիվացման խնդրով: Միջազգային դոնոր կազմակերպությունները մեծ ուշադրություն են դարձնում պետության կառավարման ոլորտում տեղական հասարակական կազմակերպությունների ներգրավվածության խնդրին: Որպես օրինակ կարելի է նշել նաև ՀՀ մշակույթի նախարարության, ՅՈՒՆԵՍԿՕ-ի ու մշակույթի ոլորտում գործող ՀԿ-ների համագործակցությունը Հայաստանում ոչ նյութական մշակույթի ժառանգության պաշտպանության և օրենսդրական դաշտի կատարելագործման հարցում:

Պետք է նշել նաև, որ պետությունն աստիճանաբար ավելի շատ է գիտակցում երրորդ սեկտորի ինստիտուցիոնալ կայացման անհրաժեշտությունը և օժանդակություն տրամադրում հասարակական կազմակերպություններին: Մշակույթի ոլորտում գործող մարզային որոշ ՀԿ-ներ առնչվում են տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ վերջիններիս հետ փորձ փոխանակելով և համատեղ ծրագրեր իրականացնելով: Ըստ «Համաշխարհային ուսուցում» կազմակերպության 2004 թ. հետազոտության՝ հարցվող ՀԿ-ների 81 տոկոսը կարծիք և ցանկություն է հայտնել, որ ՀԿ-ների հետ կապված ծրագրերն ու հիմնախնդիրները պետք է ընդգրկվեն կառավարության ծրագրերում[12]:

Հետազոտության արդյունքներով՝ ՀԿ-ների ղեկավարների մեծամասնությունը միակարծիք է այն հարցում, որ մշակութային արժեքների

---

[10] Հասարակական կազմակերպությունների հիմնախնդիրները Հայաստանում. օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտություն, էջ 13:

[11] Հասարակական կազմակերպությունների մասին ՀՀ օրենք, Ե., 2001, *www.arlis.am*

[12] Հայաստանի ՀԿ սեկտորի գնահատում, համեմատական վերլուծություն, էջ 69:

պահպանման և տարածման ոլորտում գործող ՀԿ-ները պետք է ստանան պետական աջակցություն և դառնան պետական հոգածության առարկա: Սակայն վերոհիշյալ տեսակետը միանշանակորեն չեն ընդունում այդ սեկտորի ՀԿ-ները, քանի որ պետական ֆինանսական աջակցության տրամադրումը պարունակում է նաև ռիսկային գործոններ դրանց հետագա քաղաքականացման առումով: Հարցման մասնակիցները փաստել էին, որ եթե արտասահմանյան դոնորներից ոմանք դրամաշնորհներ տալու պարագայում ուղղորդում են տեղի ՀԿ-ներին, ապա պետական աջակցության պայմաններում կա ՀԿ-ների հնարավոր քաղաքականացման վտանգ:

Ըստ դիտարկումների՝ այդ սեկտորի ՀԿ-ների ֆինանսական ոչ կայուն իրավիճակը պարբերաբար հանգեցնում է նրան, որ մի շարք կազմակերպություններ կամա թե ակամա ներքաշվում են ներքաղաքական գործընթացի մեջ՝ պաշտպանելով քաղաքական ուժերից որևիցե մեկին, կամ կատարում նրա թելադրած պայմանները՝ հետագայում ֆինանսական ներհոսքի ակնկալիքով:

4) ՀԿ-ԶԼՄ հարաբերության ոլորտում առկա խնդիրները. Հայաստանում 2007 թ. գումարվեց համաժողով՝ «ՀԿ-ների դերը հանրային քաղաքականության գործընթացում» թեմայով: Փորձագետները, խոսելով ԶԼՄ-ՀԿ հարաբերությունների մասին, նշեցին, որ լրատվամիջոցները ՀԿ-ների մասին ունեն որոշակի հայելային կարծրատիպեր: Նրանց շրջանում իշխում է այն թյուր տեսակետը, որ հասարակական կազմակերպությունները «գրանտակեր», ոչ նպատակային սեմինարներ անցկացնողներ են, այնինչ նրանք կարող էին ավելի մեծ օգուտ տալ հասարակությանը: Նաև սա է պատճառը, որը ՀԿ-ների իրականացրած ծրագրերի առյուծի բաժինը չեն լուսաբանում լրատվամիջոցները: Հակառակ պարագայում հատկապես մշակույթի բնագավառում հասարակական կազմակերպությունների իրականացրած ծրագրերի լուսաբանումը դրանց նպատակային իրագործման առումով միայն լրացուցիչ դրական խթան կարող է դառնալ: Ըստ հետազոտության՝ ՀԿ-ների մեծ մասը չի փորձում լրատվամիջոցների հետ շփումներ ստեղծել, քանի որ նրանք ուղղակի հասու չեն լրատվամիջոցների հետ հարաբերվելու տարրական կանոններին և նորմերին: Շատ քիչ կազմակերպություններ են փորձում իրենց գործունեության հաշվետվությունը հասարակությանը փոխանցել նաև լրատվամիջոց-ներով: Սակավ են մամուլի ասուլիսները, սեմինար-քննարկումները հիմնականում չեն լուսաբանվում:

ԶԼՄ-ների կողմից ՀԿ-ների գործունեության մասնակի լուսաբանումը պայմանավորված է նաև դրամաշնորհային միջոցներից ԶԼՄ-ներին որոշակի միջոցներ հատկացնելու ընդունված պրակտիկայով, որը, սակայն, չի ապահովում ՀԿ-ԶԼՄ հարաբերությունների ինստիտուցիոնալիզացիան: Կարելի է նշել եզակի դեպքեր, երբ ՀԿ-ների գործունեությունը լուսաբանող մեծածավալ նյութեր են հրապարակվել լրատվամիջոցներով: Օրինակ՝ «Ընտանիքի պլանավորում» ծրագիրը, որը, սակայն, չնայած խոր լուսաբանման, այդքան էլ միանշանակ չընդունվեց հասարակության կողմից:

ՀԿ-ԶԼՄ հարաբերություններին խոչընդոտում է նաև լրատվամիջոցների գերակշիռ մասի՝ այս կամ այն քաղաքական խմբի համակիր լինելու

հանգամանքը: Իշխանության տեսակետներն ու դիրքորոշումն արտահայտող լրատվամիջոցները, որպես կանոն, չեն լուսաբանում այն ծրագրերը, որոնք խանգարում են պետական այս կամ այն գերատեսչության «բնականոն» աշխատանքին, իսկ ընդդիմադիր լրատվամիջոցի համբավ ունեցող ԶԼՄ-ը չեն լուսաբանում, իրենց կարծիքով, պրոիշխանական ղեկավար կամ հովանավոր ունեցող կազմակերպության գործունեությունը:

5) ՀԿ ղեկավար մարմնի լիարժեք գործունեության խնդիրը. Հասարակական կազմակերպությունների ինստիտուցիոնալ կայացմանը խոչընդոտում է ղեկավարների կողմից ՀԿ-ները որպես «անձնական սեփականություն» դիտարկելու խնդիրը: Ըստ հետազոտության արդյունքների՝ ինչպես այլ, այնպես էլ մշակութային սեկտորում գործող ՀԿ-ների միայն որոշ մասն է, որ հետևում է սեփական կանոնադրությանը, պարբերաբար գումարում ժողովներ, ընտրում ղեկավար մարմին կամ փոխում լիդերին[13]: Շատ ՀԿ-ներ ճանաչվում են միայն իրենց ղեկավարի միջոցով, անձնականացվում են կապերը զանգվածային լրատվամիջոցների կամ պետական պատկան մարմինների հետ: Այս փաստը թեև առնչվում է նաև որոշակի մշակութային առանձնահատկությունների հետ, սակայն, իրավամբ, ՀԿ-ների կայացման խոչընդոտներից մեկն է: Առկա են այնպիսի հասարակական կազմակերպություններ, որոնց անդամները հիմնականում մի ընտանիքից կամ գերդաստանից են: Բնականաբար, հասարակական գործունեություն ապահովելու, սեփական օրինակով թափանցիկ և բաց աշխատանքը խրախուսելու փոխարեն ՀԿ-ն վերածվում է «ընտանեկան բիզնեսի»: Ազգակցական հիմունքներով կազմված ՀԿ-ներում, ըստ որոշ հեղինակների, գերիշխում են ընտանեկան փոխհարաբերություններին բնորոշ մի շարք հատկանիշներ: Օրինակ՝ ավանդական հայոց ընտանիքում գործող աշխատանքային սեռատարիքային բաժանումը, որոշ փոփոխություններով հանդերձ, առկա է նաև ժամանակակից ՀԿ-ներում[14]:

Ամփոփելով կարող ենք նշել, որ մշակույթի ոլորտում գործող ՀԿ սեկտորի գործունեությունը, որի նպատակը ազգային մշակութային արժեքների պահպանումը և տարածումն է, կարիք ունի պետական ֆինանսավորման: Այն կարող է լինել սոցիալական համագործակցության, սուբսիդիաների հատկացման ձևով: Կարևոր է նաև մարզային և համայնքային մակարդակով ազգային մշակույթի պահպանման համար ֆոնդերի ստեղծումը, որի միջոցները կարող են ձևավորվել միջազգային կազմակերպությունների, պետական բյուջեի, բիզնես սեկտորի ներդրումներից: Կարևոր ենք համարում նաև բիզնես սեկտորի կողմից մասնավոր նվիրատվությունների, եկամուտների մեկ տոկոսի փոխանցումը, որը կարող է նպաստել ՀԿ այդ ոլորտի կայացմանը:

Ցավոք, առկա լուրջ հիմնախնդիրները դեռ չեն հանգեցրել այն մակարդակի, որ խոսվի հանրապետությունում կայացած երրորդ սեկտորի

---

[13] Հասարակական կազմակերպությունների հիմնախնդիրները Հայաստանում. օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտություն, էջ 17:

[14] **Խառատյան Լ., Շագոյան Գ.,** «Ընտանիք»-ն արդի հասարակական կազմակերպությունների համատեքստում, Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրներ, Ե., 2001, էջ 51:

գոյության մասին: Միևնույն ժամանակ, պետք է փաստել, որ այս հիմնախնդիրների լուծման գործընթացը արդեն իսկ շարժվել է «մեռյալ կետից», և որոշակի առաջընթաց կարծես նշմարվում է: Հասարակական կազմակերպությունների կայացումը կարելի է համարել մեր երկրի զարգացման կարևորագույն պայմաններից և բաղկացուցիչներից մեկը:

ПРОБЛЕМЫ ОБЩЕСТВЕННЫХ ОРГАНИЗАЦИЙ В РА, ВЫПОЛНЯЮЩИХ ЭТНОКУЛЬТУРНЫЕ ФУНКЦИИ

ГАЛСТЯН Н. М.

Резюме

Становление общественных организаций (ОО) является одним из важнейших условий развития РА. Общественные организации представляют собой структуру, основанную на принципе добровольности и объединяющую людей с общими интересами и целями. Деятельность общественных организаций регулируется законом РА “Об общественных организациях”. Общественные организации часто называют третьим сектором. Государство осознает необходимость институционального становления этих организаций, оказывая им доверие и поддержку.

Общественные организации обычно занимаются теми вопросами, которые не могут быть решены на государственном уровне.

В Армении зарегистрировано боле 4000 общественных организаций.

Необходимыми условиями становления общественных организаций РА являются: 1. финансовая независимость; 2. взаимоотношения ОО и государства; 3. взаимоотношения ОО и СМИ; 4. полноценная деятельность руководящего органа. Важнейшими составляющими финансовой независимости ОО являются “Grant”-ы – безвозмездно предоставляеые финансовые средства для поддержания их деятельности.

Деятельность общественных организаций в сфере культуры направлена на патриотическое воспитание, сохранение этнической самости и национальных культурных ценностей. Подобные организации нуждаются в государственном финансовом содействии, ибо международные организации не заинтересованы в предоставлении грантов для поддержания последних.